

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՑՈՒՄ

**«Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ը հրավիրում է աճուրդի, որը տեղի կունենա 2023թ. հունիսի 14-ին, ժամը՝ 11:00-ին
Ք.ԵՐԵՎԱՆ, ԶԱՔԻՅԱՆ 10 ՀԱՍՑԵՈՒՄ, հայտերի ընդունման վերջնաժամկետն է՝ 2023թ. հունիսի 13-ին, ժամը՝ 17:00-ին
ԴԱՍԱԿԱՆ ԱՃՈՐԴՈՎ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ**

Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2023թ. հունվարի 9-ի թիվ 05-Ա հրամանով օտարման ենթակա «Մասիսի թիվ 5 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված ՀՀ սեփականություն հանդիսացող մասնաշենքի կազմաքանդման և կաթսայատան վերակառուցման արդյունքում ապամոնտաժված շարժական գույքերը

Հ/Հ	Լոտի հերթական համարը	Գույքի (լոտի) անվանումը	Գույքի (լոտի) գտնվելու վայրը	Չափման միավորը	Քանակը	Լոտի մեկնարկային գին /ՀՀ դրամ/	Նախավճարը /ՀՀ դրամ/	Մասնակցության վճարը /ՀՀ դրամ/
1	1	Ավտոտամացված Q=150 կվտ ջրային կաթսա	ք. Մասիս, Երևանյան փողոց 73	հատ	2	17 749	888	1 000
2	3	Մինչև 0,1 տոննա քաշով սնուցման պոմպ	ք. Մասիս, Երևանյան փողոց 73	հատ	2	35 497	1 775	1 700
3	4	Ճնշումային ընդարձակման բաք 150լ տարողությամբ	ք. Մասիս, Երևանյան փողոց 73	հատ	1	39 935	1 997	1 700
4	5	Փ 800 մմ կեղտազտիչ	ք. Մասիս, Երևանյան փողոց 73	հատ	1	3 551	178	500
5	6	Մետաղական լվացարան	ք. Մասիս, Երևանյան փողոց 73	հատ	1	1 332	67	500
6	7	Մետաղական Փ-300 մմ ծխատար	ք. Մասիս, Երևանյան փողոց 73	հատ	2	445	23	500
7	8	Մետաղական ծխնելույզ Փ-300 մմ 1,9 մ	ք. Մասիս, Երևանյան փողոց 73	մ	15	13 312	666	1 000
8	9	Պողպատյա Փ-76 մմ խողովակներ	ք. Մասիս, Երևանյան փողոց 73	մ	30	10 650	533	1 000
9	10	Պողպատյա Փ-25 մմ խողովակներ	ք. Մասիս, Երևանյան փողոց 73	մ	25	4 438	222	500
10	11	Սողնակավոր փական Փ-80 մմ	ք. Մասիս, Երևանյան փողոց 73	հատ	5	8 875	444	500
11	12	Հետադարձ փական Փ-80 մմ	ք. Մասիս, Երևանյան փողոց 73	հատ	2	5 326	267	500
12	13	Տարբեր տեսակի (չափսի) փական Փ-25 մմ-40մմ	ք. Մասիս, Երևանյան փողոց 73	հատ	32	42 597	2 130	1 700
13	14	Ջերմաչափ	ք. Մասիս, Երևանյան փողոց 73	հատ	3	2 664	134	500
14	15	Ճնշչափ	ք. Մասիս, Երևանյան փողոց 73	հատ	7	4 660	233	500
15	17	Տանիքի փայտահյուֆ	ք. Մասիս, Երևանյան փողոց 73	խմ	36	559 070	27 954	13 837
16	18	Մետաղալաստե պատուհաններ	ք. Մասիս, Երևանյան փողոց 73	քմ	294.28	391 722	19 587	10 244
17	20	Ալյումինե ջեռուցման մարտկոցներ	ք. Մասիս, Երևանյան փողոց 73	հատ	85	94 289	4 715	2 808

* Աճուրդի կազմակերպչի անվանումը, գտնվելու վայրը՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ (հասցե՝ ք.Երևան, Զաքիյան 10):

* Աճուրդի մասնակից կարող են հանդիսանալ ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև համայնքները (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի), որոնք աճուրդի մասին հրապարակային ծանուցման պահից մինչև աճուրդի բացմանը նախորդող աշխատանքային օրը (ժամը՝ 17:00-ն) ներկայացրել է աճուրդի մասնակցության հայտ:

* Յուրաքանչյուր հաջորդ լոտի աճուրդը սկսվում է նախորդ լոտի աճուրդն ավարտվելուց հետո:

• Մասնակիցները վաճառվող լոտ(եր)ին կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչև աճուրդի բացմանը նախորդող օրը ընկած ժամանակահատվածում՝ ք. Մասիս, Երևանյան փողոց 73 հասցեում գտնվող դպրոցի շենքի փարածքում, զանգահարելով 094-64-09-77 հեռախոսահամարով, յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 11:00-18:00-ն:

Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում աճուրդի ներկայացված լոտի (լոտեր) որակի համար: Աճուրդում գործում է հետևյալ սկզբունքը՝ «աճուրդի մասնակիցը «տեսել-համաձայնել է»:

Աճուրդի մասնակցության հայտերի ներկայացնելը և պայմանները՝

* Աճուրդին կարող են մասնակցել այն անձինք, ովքեր վաճառվող լոտի նկարմամբ կարող են ունենալ սեփականության իրավունք, ինչպես նաև սահմանված ժամկետում կազմակերպչին են ներկայացրել աճուրդի մասնակցության հայտ՝ աճուրդի մասնակցության համար անհրաժեշտ փաստաթղթերով:

Աճուրդի մասնակցության հայտին կից անհրաժեշտ փաստաթղթերն են՝

- նախազեմարի վճարումը հաստատող անդորրագիրը (յուրաքանչյուր նախընտրած լուրի համար, **պարտադիր նշելով մասնակցի անունը և ազգանունը**), մուտքագրման հաշիվն է՝ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության **թիվ 900018002171**, ստացող՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ, վճարման նպատակը՝ **աճուրդի նախավճար**՝ պարտադիր նշելով օտարման մասին որոշման (հրամանի) համարը և ամսաթիվը, լուրի հերթական համարը:

- մասնակցության վճարումը հաստատող անդորրագիրը (յուրաքանչյուր նախընտրած լուրի համար, **պարտադիր նշելով մասնակցի անունը և ազգանունը**), մուտքագրման հաշիվն է՝ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության **թիվ 900018002981**, ստացող՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ, վճարման նպատակը՝ **աճուրդի մասնակցության վճար**՝ պարտադիր նշելով օտարման մասին որոշման (հրամանի) համարը և ամսաթիվը, լուրի հերթական համարը: **Մասնակցության վճարը գույքի (լուրի) գնի մեջ չի ներառվում և անկախ աճուրդի արդյունքներից չի վերադարձվում:**

- իրավաբանական անձանց համար՝ պետական գրանցման համարը, իսկ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ անձնագրի և սոցիալական քարտի համարը,
- հայտատուի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրված լիազորագիր (եթե աճուրդին ներկայանում է լիազորված անձը)։

* Աճուրդի մասնակցության հայտը՝ աճուրդի մասնակցության համար անհրաժեշտ փաստաթղթերով ներկայացնելու դեպքում Կազմակերպիչը մասնակցին տրամադրում է մասնակցի վկայական (տոմս), որի տրամադրումը դադարեցվում է աճուրդը սկսելուց առնվազն երեսույն րոպե առաջ:

Աճուրդի մասնակցի չհամարվող անձինք և այդ անձանց գործողությունների վարքագծի կանոնները՝

- Աճուրդին կարող են ներկա գտնվել դիտորդներ՝ աճուրդի մասնակցի չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճարը՝ 2000 ՀՀ դրամ՝ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության թիվ 900018002981 հաշվեհամարին:

- Վճարումը հաստատող անդորրագիրը (նշելով վճարման նպատակը՝ դիտորդի տոմսի վճար) և անձնագրի պատճեն ներկայացնել Կազմակերպչին՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ՝ ընդհուպ մինչև աճուրդի սկսվելը (հասցե՝ ք.Երևան, Զաքիյան 10):

- Աճուրդի մասնակիցները և մասնակից չհամարվող անձինք աճուրդի անցկացման դադարում զբաղեցնում են առանձին նստավայրեր:

- **Աճուրդի մասնակիցները և մասնակցի չհամարվող անձինք պարտավոր են չխոչընդոտել աճուրդի անցկացմանն ու ենթարկվել աճուրդի կանոնակարգով սահմանված կանոններին:**

Աճուրդի անցկացման և աճուրդում հաղթողին որոշելու կարգը՝

- Աճուրդի մասնակիցների **անձնագրի և մասնակցի վկայական(ներ)ի** առկայությունը պարտադիր է, լիազորված անձի դեպքում՝ նաև **լիազորությունները հաստատող փաստաթղթերը:**

- Նախքան աճուրդի սկսվելը Կազմակերպիչը գրանցում է մասնակիցներին, ստուգելով նրանց ինքնությունը, լիազորությունները հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև աճուրդի մասին հրապարակային ժանուցման մեջ նշված այլ փաստաթղթերը և յուրաքանչյուր մասնակցին, ներկայացված մասնակցի վկայականի (տոմսի) համարին համապատասխան, տրամադրում է քարտեր:

- Աճուրդը բացվում է հայտարարությամբ: Հայտարարությամբ մեջ նշվում է աճուրդում վաճառվելիք լուրի անվանումը և նկարագրությունը, դրա մեկնարկային գինը, լուրի նկարմամբ սահմանափակումները, ինչպես նաև աճուրդի անցկացման ձևը, այդ թվում՝ գնային հայտեր ներկայացնելու կարգը:

- Աճուրդը անց է կացնում աճուրդավարը: Աճուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լուրը: Ցանկացած մասնակցի իրավունք ունի, նախքան աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ (բարձրացնելով իր մասնակցության քարտը), որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը՝ նվազագույն հավելման (քայլի) չափով:

- Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից:

- Եթե մի քանի մասնակից միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, որից հետո ավելի բարձր գնային հայտ չի ներկայացվել, ապա աճուրդավարը վիճակահանության միջոցով որոշում է հաղթող մասնակցին:

- **Աճուրդում գոյացած գինը նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափը չգերազանցելու դեպքում վճարվում է աճուրդի արդյունքների մասին արձանագրության ստորագրման օրը, իսկ գերազանցելու դեպքում հաղթող մասնակիցը պարտավոր է մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել մասնակցի վկայականը (տոմս) և վճարել իր առաջարկած գնի հինգ տոկոսի չափով նախավճարը (ՀՀ օրենսդրությամբ սահմանված վճարման միջոցներով), որը սահմանված ժամկետում հետագա վճարումների չկատարման դեպքում չի վերադարձվում և փոխանցվում է ՀՀ պետական բյուջե: Գնորդը վճարումները կարող է կատարել նաև լիազորված անձի միջոցով:**

- Վճարման դեպքում՝ աճուրդի հաղթողի առաջարկած գնի հինգ տոկոսի չափով նախավճարի գումարը հաշվարկվում է հաղթողի (գնորդի) կողմից վճարման ենթակա գումարի մեջ և աճուրդի Կազմակերպչի կողմից փոխանցվում համապատասխան հաշվին:

- **Եթե աճուրդը համարվում է չկայացած հաղթող մասնակցի կողմից վճարումները սահմանված ժամկետում չկատարվելու կամ աճուրդային արձանագրությունը չստորագրվելու պատճառով, ապա այդ դեպքերում հաջորդ աճուրդը կազմակերպվում է նույն պայմաններով՝ առանց մեկնարկային գնի նվազման: Տվյալ մասնակիցը հայտարարված գույքի նոր աճուրդին չի կարող մասնակցել:**

* **Աճուրդի Կազմակերպիչը նախավճարը, աճուրդը կայանալուց կամ չկայացած հայտարարվելու պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում, վերադարձնում է աճուրդում չհաղթած մասնակիցներին՝ մասնակցության հայտում նշված հաշվեհարկոջ հաշվեհամարին:**

* **Համաձայն Պերական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2023թ. հունվարի 9-ի թիվ 05-Ա հրամանի՝**

- Աճուրդը կանցկացվի դասական (գնի ավելացման) եղանակով:

- Առաջին աճուրդի ժամանակ չվաճառված գույքի վաճառքի նպատակով կազմակերպվում է նոր աճուրդ՝ գույքի վաճառքի մեկնարկային գինը նվազեցնելով վերջին աճուրդի մեկնարկային գնի 15 տոկոսի չափով:

- Աճուրդում հաղթող ճանաչված անձն արձանագրությունը ստորագրելու օրվանից 10 օրվա ընթացքում պարտավոր է վճարել լուրի (լուրերի) գինը:

- Աճուրդի հաղթողի կողմից սահմանված ժամկետում վճարումները չկատարելու դեպքում մուծված նախավճարը չի վերադարձվում, աճուրդը համարվում է չկայացած և լուր (եր)-ը վաճառելու նպատակով

կազմակերպվում է նոր աճուրդ՝ նույն պայմաններով:

*** Լրացուցիչ տեղեկություններ ստանալու և աճուրդի անցկացման կանոնակարգին ծանոթանալու համար կարող եք դիմել «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ, հասցե՝ ք.Երևան, Զաքիյան 10 կամ զանգահարել՝ 010-52-63- 32 , 043-06-07-16 հեռախոսահամարներով:**

Ծանուցում.

«Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 9-րդ հոդված.

1. Այն պայմանները և տեղեկությունները, որոնք նշվել են աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ, ենթակա չեն փոփոխման, բացառությամբ այն դեպքերի, երբ փոփոխություններ են տեղի ունեցել աճուրդով վաճառվելիք լուրի նկատմամբ սահմանափակումների մասով կամ փոփոխություններ են տեղի ունեցել՝ կապված լուրի ֆիզիկական վիճակի հետ, կամ աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նախատեսվել է փոփոխությունների հնարավորությունը:

Սույն մասով նախատեսված դեպքում աճուրդի կազմակերպիչը պարտավոր է մինչև նախորդող երեք օրը կարարել աճուրդի մասին հրապարակային ծանուցման փոփոխություններ և լրացումներ (այսուհետ՝ հրապարակային ծանուցման փոփոխություն) այն ձևով, ինչպես կարարվել էր աճուրդի մասին հրապարակային ծանուցումը:

2. Եթե հրապարակային ծանուցման փոփոխությունը չի կարարվել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում և կարգով, ապա աճուրդի կազմակերպիչը կրում է մասնակիցների կրած իրական վնասների ռիսկը:

3. Աճուրդի մասին հրապարակային ծանուցում կատարելուց հետո թույլատրվում է հրապարակային ծանուցման փոփոխությամբ կատարել ցանկացած լրացում, եթե դրանով չեն փոփոխվում աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված էական պայմանները:

Քրեական օրենսգրքի 196 հոդված.

Հրապարակային սակարկությունների անցկացման կարգը չարամտորեն խախտելը, որը խոշոր վնաս է պատճառել գույքի սեփականատիրոջը, սակարկություններ կազմակերպողին, գնորդին կամ այլ տնտեսավարող սուբյեկտին՝ պարժվում է փուզանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

*** Ուշադրություն. աճուրդի ընթացքը տեսաձայնագրվում է՝ դրա օրինականությունը ապահովելու նպատակով:**